ԿԱ ՄԻ ԶՐՈՒՅՑ, ԹԵ...

ԱՐԱՄ ՂԱՆԱԼԱՆՅԱՆ
(1909–1983)

Հայագետ, գրականագետ, բանահավաք: Ա. Ղանալանյանը ծնվել է Ախալցխայում: Սովորել է տեղի դպրոցում, ապա ուսումը շարունակել Թիֆլիսի հ. 72 միջնակարգ դպրոցում, այնուհետև տեղափոխվել է Երևան: 1927 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի պատմագրական ֆակուլտետը՝ աշակերտելով Մանուկ Աբեղյանին, Հրաչյա Աճառյանին, Գրիգոր Ղափանցյանին, Արսեն Տերտերյանին:

1931–1933 թթ. դասավանդել է Երևանի դպրոցներում: 1937–1941 թթ. դասախոսել է ԵՊՀ-ում և 1934–1951 թթ.՝ Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտում: 1943–1960 թթ. եղել է Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ժողովրդական բանահյուսության բաժնի վարիչ, 1960–1983 թթ.՝ ավագ գիտաշխատող: